




ԵՐԱԿՐԹՈՆԵԱՆ

ՄԱՅԻՍ

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



Աստվածակառույց Մայր Աթոռ Սրբաբնակավայրում հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում բարեպաշտ մեր ժողովրդին՝ Հանրապետության տոնի առթիվ:

Հայաստանի Հանրապետության հռչակումը մայիսյան հերոսամարտերից հետո արգասիքն էր մեր ժողովրդի ազատ

ու անկախ ապրելու բաղձանքի եւ հայրենի պետականության վերականգնման համար դարավոր մաքառումների ու պայքարի: Հանրապետության տոնը քաջալերության, միասնության եւ համախմբումի խորհուրդն ունի, որ պիտի առաջնորդի մեզ դեպի նոր հաղթանակներ եւ գորացնի մեր ժողովրդին՝ ամբողջական նվիրումով ծաղկուն դարձնելու հայրենի մեր երկիրը եւ իրագործելու մեր նախնյաց տեսիլքներն ու լուսավոր հույսերը:

Այսօր, ինչպես մայիսյան հերոսամարտի օրերին, մեր սրտերում բող հնչեն հայոց եկեղեցիների զանգերը՝ կոչելով ամենքիս աստվածաշնորհության, հայրենամկեր ծառայության, եղբայրասիրությանը ազնիվ ու քաջարի գործերի:

Փրկչի Իջման սբ Մեղանի առջեւ աղոթում ենք, որ Աստված խաղաղության մեջ պահի Հայոց մեր երկիրը եւ Իր առատ շնորհներով բարեգաղթի հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր զավակների կյանքը այսօր եւ հավիտյան:

Հանրապետական մաղթանք Մայր Աթոռ Սր Էջմիածնում



Մայիսի 28-ին՝ Հանրապետության տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սր Էջմիածնի միաբանների ուղեկցությամբ այցելեց Սարգսյան պատի հուշահամալիր, որտեղ ներկա գտնվեց 1918-ի հե-

րոսամարտին նվիրված հանդիսավոր միջոցառմանը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետը եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակ դրեցին Սարգսյան պատի հուշահամալիրում, որից հետո Նորին Սրբությունն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ Մայիսյան հերոսամարտերում զոհված քաջարի հայորդիների հոգիների հանգստության համար:

Նույն օրը Մայր տաճարում տոնի առթիվ կատարվեց Հանրապետական մաղթանք: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Նախագահության եկեղեցականաց դասն աղոթեց Հայաստան աշխարհի խաղաղության, բարօրության եւ անսասանության համար:

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են Մայր Աթոռ Սր Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Մենուայ վրդ. Պարսամյանը, ազատվելով Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահի պարտականություններից, ծառայության է կոչվել Ֆրանսիայի հայոց թեմում:

Չավեն արքեպ Յագիջյանն իր հոգեւոր ծառայությունը կիրականացնի Հնդկահայոց հոգեւոր հովվությունում:

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի միջեւ ստորագրվեց համագործակցության համաձայնագիր

Մայիսի 16-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքի օրհնությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ Գեւորգյան ճեմարանի եւ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի միջեւ համագործակցության համաձայնագրի ստորագրումը: Այս առիթով Հայաստան էր ժամանել Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ռուս Ուղղափառ Եկեղեցու ուսումնական կոմիտեի Նախագահ, ակադեմիայի ռեկտոր Վերեսյուկ արք. Եվգենի:

Հանդիսությանը ողջույնի խոսք ասաց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեւորգ Եպս Սարգսյանը: Ներկաներին իր խոսքն ուղղեց Նաեւ Եվգենի արքեպիսկոպոսը՝ համաձայնագրի ստորագրումը կարեւոր քայլ նկատելով երկու եկեղեցիների հարաբերություններում: Նա ընդգծեց երիտասարդների կրթության եւ եկեղեցականների պատրաստության կարեւորությունը՝ անդրադառնալով կրթական բարեփոխումներին, ինչպես Նաեւ դրանց իրականացման գործում հոգեւոր ճեմարանների միջեւ համագործակցության եւ փորձառության փոխանակման անհրաժեշտությանը:

Կրթական հաստատությունների համագործակցության մեկնարկը ողջունեց Նաեւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն, Արթիկի թեմի առաջնորդ Հովակիմ Եպս Մանուկյանը: Այնուհետեւ ստորագրվեց համագործակցության համաձայնագիրը: Համաձայնագրի շրջանակներում Նախատեսվում է համագործակցություն աստվածաբանական, հումանիտար գիտությունների եւ հոգեւոր կրթության բնագավառներում, ինչպես Նաեւ ուսումնական, գիտական, ուսումնամեթոդական եւ տեղեկատվական-հրատարակչական գործունեության համախմբում եւ ջան-



քերի միավորում՝ ի նպաստ միասնական հումանիտար գիտակրթական տարածքի ընդլայնման: Ստորագրված փաստաթղթով փոխադարձ համաձայնություն ձեռք բերվեց՝ մշակելու եւ ներդնելու համատեղ փոխլրացնող կրթական ծրագրեր, օգտագործելու դասա-

համատեղ հրատարակություն: Համաձայնագրի ստորագրումից հետո հոգեւոր երգերի կատարումներով հանդես եկան Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի եւ Գեւորգյան ճեմարանի երգչախմբերը: Հանդիսությունը փակվեց Մայր Աթոռի վանական խորհրդի



խոսների փորձը՝ նրանց մասնակից դարձնելով համատեղ ուսուցման ծրագրերի մշակմանն ու իրականացմանն առանձին առարկաների կամ կրթական ծրագրերի շրջանակներում: Ծրագրվում է կազմակերպել համատեղ գիտական միջոցառումներ ու գիտահետազոտական ուսումնասիրություններ, ուսումնամեթոդական աշխատանքների բնագավառում՝ կատարել փորձի փոխանակում, նպաստել դասախոսների որակավորման բարձրացմանը, մշակել մանկավարժական տեխնոլոգիաներ: Նաեւ կպատրաստվի գիտական ու կրթական գրականության

Նախագահ եւ հրատարակչական բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի օրհնության խոսքով:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռ Սր Էջմիածնի միաբանները, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսական կազմը եւ ուսանողությունը, ՀՀ-ում ՌԴ դեսպանատան խորհրդական Վիկտոր Կրիվոպոլսկովը, ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի հրամանատարի առաջին տեղակալ Յուրի Ռադիկոնովը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու ուսումնական կոմիտեի Նախագահի օգնական գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Գվիդդեւ:

Համբարձման տոնի նշանավորումը՝ հանդիսավոր համերգով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը, կարեւորելով սերունդների՝ հայրենասիրական արժեքներով դաստիարակվելու գործում ազգային-եկեղեցական տոների հանդիսավոր կերպով նշումը կրթական հաստատություններում, ՀՀ Կրթության եւ գիտության, Սփյուռքի, Մշակույթի Նախարարությունների, Երեւանի քաղաքապետարանի եւ Արարատյան հայրապետական թեմի «Արարատ» հոգեւոր միության հետ համագործակցաբար կազմա-

կերպել էր Համբարձման տոնի նշանավորումը՝ հանդիսավոր համերգով, որին հրավիրված էին մասնակցելու Երեւանի հանրակրթական դպրոցների տնօրենները, Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսուցիչները եւ սիրիահայերի «Կիլիկյան» դպրոցի մանկավարժական համակազմը:

Միջոցառումը տեղի ունեցավ մայիսի 13-ին՝ Հայաստանի երգչախմբային ընկերության համերգասրահում:

**Մայր Աթոռ Սր Էջմիածնի
քրիստոնեական դաստիարակության կենտրոն**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՋԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

21 մայիսի «Հայաստան» համահայկական հիմնադրամի սեղական մարմինների ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանի: Ողջունելով հիմնադրամի տեղական մարմինների ներկայացուցիչներին՝ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը բերեց ներկաներին: Չնայած անդրադառնալով «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությանը՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ հիմնադրամի ծառայությունը՝ կոչված հայրենիքի կյանքի առաջընթացին ու բարօրությանը, մեծ հանձնառություն ու հետեւողական աշխատանք է պահանջում:

Չրույցի ընթացքում Վեհափառ Հայ-

րապետը կարեւորեց Հայ Եկեղեցու առավել չափով ներգրավվածությունը հիմնադրամի աշխատանքներին, ինչը կնպաստի նաեւ ազգային ինքնագիտակցության կերտմանն ու ազգային ոգու արթնացմանը: Վերջում Նորին Սրբությունն արդյունավոր գործունեություն մարդեց հիմնադրամին:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաներին հուզող հարցերին, որոնք առնչվում էին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի ներկայիս վիճակին ու գործունեությանը՝ տարբեր ոլորտներում, Սիրիայի հայ համայնքին եւ Հայաստանում ապաստան գտած սիրիահայ ընտանիքներին Մայր Աթոռի կողմից ցուցաբերված օգնությանը, ինչպես նաեւ ներկայացուցական եւ միջեկեղեցական տարբեր խնդիրներին:

23 մայիսի

Շվեյցարիայի դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրաժեշտի հանդիպում ունեցավ Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Կոստանտին Օբոլենսկու հետ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց դիվանագիտական առաքելությունը Հայաստանում ավարտող դեսպանին՝ անցնող տարիների ծառայության ու հայ-շվեյցարական կապերի ամրապնդման գործում ներդրած ջանքերի համար:

Նորին Սրբությունն իր խոսքում կարեւորեց երկու երկրների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունների հետագա սերտացումն ու զարգացումը, ապա անդրադարձավ Շվեյցարիայի հայկական համայնքի ազգային-հոգեւոր կյանքին՝ ի դեմս դեսպանի իր

գնահատանքը հայտնելով երկրի իշխանություններին՝ համայնքի հանդեպ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակություն հայտնեց Շվեյցարիայի իշխանությունների կողմից տարածաշրջանում առկա խնդիրների նկատմամբ ցուցաբերվող ուշադրության եւ դրանց հաղթահարման ուղղությամբ ներդրված քայլերի առիթով:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված՝ տարածաշրջանի երկրների հոգեւոր առաջնորդների ջանքերին, ինչպես նաեւ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կողմից ծրագրվող միջոցառումներին:

26 մայիսի

Ռուսաստանի Կուրսկի մարզի ղապիրականությանը

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության Կուրսկի մարզի պատվիրականությանը՝ գլխավորությամբ Կուրսկի մարզի նահանգապետի տեղակալ, ներքին քաղաքականության կոմիտեի նախագահ Լյուդմիլա Գրեբենկովայի:

Հանդիպման սկզբում պատվիրականության անդամ, Ռուսաստանի հայերի միության Կուրսկի տարածքային կազմակերպության նախագահ Ալեքսան Կոչտոյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց պատվիրականության անդամներին եւ Հայաստան այցելության նպատակը:

Վեհափառ Հայրապետը պատվիրականության անդամներին համառոտ ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմությունը, հորիորդային Միության տարիներին Եկեղեցու կրած դժվարությունները եւ ներկա վիճակը՝ ընդգծելով Եկեղեցու կարեւոր դերը հայ ժողովրդի հոգեւոր, ազգային եւ մշակութային կյանքում: Խոսելով հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամական կապերի ձեւավորման գործում Հայ Եկեղեցու դերակատարության մասին՝ Ամենայն Հայոց Հայրապետը մասնավորապես կարեւորեց երկու ժողովուրդների բազմադարյա ջերմ հարաբերությունների հետագա



սերտացումն ու զարգացումը՝ մշակույթի, տնտեսության եւ այլ ոլորտներում:

Անդրադառնալով Ռուսաստանի հայկական համայնքին՝ Վեհափառ Հայրապետն իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց ՌԴ իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակների նկատմամբ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Հանդիպման անդրադարձ կատարվեց նաեւ Հայ Առաքելական եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցիների սերտ կապերին, Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ինչպես նաեւ երիտասարդ սերնդի հոգեւոր դաստիարակության անհրաժեշտությանը:

27 մայիսի

Զեխիայի մշակույթի նախարարին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Զեխիայի Հանրապետության մշակույթի նախարար Ալենա Հանակովայի գլխավորած պատվիրականությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի:

Հանդիպման սկզբում ՀՀ մշակույթի փոխնախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Հայաստանի եւ Զեխիայի մշակույթի նախարարությունների միջեւ 2010-ին ստորագրված համաձայնագրի գործնական արդյունքներն ու ներկայումս ձեռնարկվող համատեղ ծրագրերը:

Ողջունելով Զեխիայի մշակույթի նախարար Ալենա Հանակովայի այցը Հայաստան՝ Նորին

Սրբությունը վստահություն հայտնեց, որ մշակույթի նախարարությունների միջեւ ձեւավորված համագործակցությունը դրական արդյունքներ կարձանագրի: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու երկրների հարաբերությունները թե՛ քաղաքական եւ թե՛ մշակութային ոլորտներում ընդարձակվում, զորանում եւ առավել լայն ընդգրկում են ստանում:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Զեխիայի հայկական համայնքին: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ի դեմս տիկին Ալենա Հանակովայի, իր շնորհակալությունը հայտնեց Զեխիայի իշխանություններին՝ հայերի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ նորակազմ հայկական համայնքն իր դրական ներդրումը պիտի բերի Զեխիայի հասարակական եւ մշակութային կյանքի զարգացմանը:

Հանդիպման անդրադարձ կատարվեց նաեւ միջմշակութային շփումների ու փորձի փոխանակման անհրաժեշտությանը, հասարակական կյանքում քրիստոնեական հավատի ու արժեքների կարեւոր դերակատարությանը, Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ առաջին տիկինը այցելեցին «Նազգաշյան մանուկների տուն»



Մայիսի 15-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանն այցելեցին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Նազգաշյան մանուկների տուն» երեխաների աջակցության կենտրոն՝ ուղեկցությամբ ԱՄՆ հայոց Արեւմտյան

թեմի առաջնորդ Հովհանն արք. Տերտերյանի, Մայր Աթոռի վանական խորհրդի նախագահ Նաթան արք. Հովհաննիսյանի եւ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի:

Հայ Եկեղեցու ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի հայկական բարեգործական «Մեր Հույս» կազ-

մակերպության եւ անհատ բարերարների աջակցությամբ գործող կենտրոնում այժմ ապրում է սոցիալապես անապահով ընտանիքների 13-16 տարեկան 15 աղջիկ՝ ստանալով մասնագիտական կողմնորոշում ու սոցիալական աջակցություն:

Այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը եւ Հայաստանի առաջին տիկինը, ուղեկցությամբ կենտրոնի տնօրեն Միհրան Միրիջանյանի, շրջեցին կենտրոնում, ծանոթացան ստեղծված պայմաններին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ տիկին Ռիտա Սարգսյանը մտերմիկ զրույց ունեցան դեռահասների հետ: Նրանք անկաշկանդ ու ազատորեն ներկայացրին իրենց առօրյան եւ ծրագրերը, որից հետո աղջիկները հանդես եկան գեղարվեստական հայտագրով, կատարեցին ազգային ու հոգեւոր երգեր, արտասանեցին իրենց հեղինակած բանաստեղծությունները:



Շնորհակալություն հայտնելով ՀՀ առաջին տիկնոջը՝ «Նազգաշյան մանուկների տուն» այցելելու համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ այս հանդիպումը մեծ ուրախություն պատճառեց երեխաներին, եւ իրենց հանդեպ տիկին Սարգսյանի դրսեւորած սերն ու հոգատարությունը մշտապես պիտի կրեն սրտերում:

Տիկին Ռիտա Սարգսյանը կենտրոնի 15 սաներին հանձնեց նվերներ, առանձնաբար ծանոթացավ յուրաքանչյուրի հետ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի առաջին տիկինն այցելեցին կենտրոնի հարեւանությամբ գտնվող Արաբկիրի հայրոցյաց տուն, որտեղ հայրոցյաց տների հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. Հովնաթյանը ներկայացրեց Մայր Աթոռի եւ ՀԲԸՄ հովանու ներքո գործող հայրոցյաց տների գործունեությունը: Հայրոցյաց տան սաները Նորին Սրբությանը եւ տիկին Ռիտա Սարգսյանին ողջունեցին ազգային պարերի կատարումներով:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՐԻԿՈՍՆԵՐ

ՄԻՄԵՆՈՆ Ա ԵՐԵՎԱՆՅԻ (1763-1780)

Սկիզբը՝ թիվ 7-9

Աստապատուցու հեռացմամբ, կարծես թե, սկսվեցին Բասմաջյանի ծախսորդությունները: Դրանով նա ատելի դարձավ կաթողիկոսին, Մայր Աթոռին ու ամբողջ ազգին: Սիմեոնը խիստ տրտմեց իր ծախսորդման համար, առավել եւս, որ իր կողմից փոխանորդ նշանակված անձն անարգվել էր ու պատրիարքի առաջարկով եւ պետական հրամանով վտարվել Կ. Պոլսից: Նա իր գալույթը զսպեց, ծայրահեղ քայլերի չգնաց, սակայն իր ծախսորդումը չմոռացավ, ինչը հստակ երեւում է «Ջամբոխ»-ի ռեկեմ հերթին Կ. Պոլսի մեծավորներն Աստապատուցու հեռանալուց հետո առաջարկեցին, որ կաթողիկոսական փոխանորդի փոխարեն պարզապես կալվածքները հսկող կամ մուլթեւլիլի լինի Էջմիածնի կողմից, եւ Սիմեոնը ստիպված եղավ զիջել ու այդ պաշտոնը տալ ծերունի Բարսեղ վարդապետին, սակայն կացությունն արմատական բարձրման չենթարկվեց:

Բասմաջյանը, խաղալիք դառնալով խարդախ հակառակորդների ձեռքում ու կատարելով նրանց ծախսորդ հրահանգները, պաշտոնական արվեց մի հզոր ամիրայի կողմից, որի անունը չի նշվում: Հավանաբար խոսքը Գասպար Մուրադյան ամիրայի մասին է: Դրանով Բասմաջյանը նախապատրաստել էր իր անկումը:


Բասմաջյանն աթոռի վրա մնաց, այնուամենայնիվ, մինչեւ 1773 թիվը՝ հակառակ իր թույլ եւ երեւում բնավորությանը:

Նրան տապալել էին ուզում ո՛չ մեծավորները եւ ո՛չ էլ ազգը, եւ ո՛չ էլ ինքը քայլեր կատարեց այդ վիճակից դուրս գալու համար: Սիմեոնը իմացավ, թե ովքեր էին իր ծախսորդման հեղինակները եւ թշնամանքը Բասմաջյանի դեմ մինչեւ վերջ չտարավ: Բասմաջյանի թուլությունների մեջ կարելի էր, թերեւս, եպիսկոպոսական աստիճանի չունենալն էր, որով նա ստորադաս էր դիտվում մայրաքաղաքի եպիսկոպոսների նկատմամբ: Երբ Բասմաջյանը կամեցավ Էջմիածին գնալ, վերոհիշյալ ամիրան դրան ընդդիմացավ, թե պատրիարքին պատշաճ չէ օտար տերության երկիր գնալ: Մեծամեծները նամակ գրեցին կաթողիկոսին, որ նրա գալը հնարավոր է միայն արքունի հրամանով: Սիմեոնը, պարզելով պատճառը, 1765 թվի սեպտեմբերի 10-ին հաշտության հրավեր կարդաց եւ սիրով հրամաններ տվեց:

Բասմաջյանը, կաթողիկոսի այդ հաշտարար կեցվածքից քաջալերված, խնդրեց վերջինիս, որ թույլտվություն տա նրան՝ ձեռնադրվելու Կ. Պոլսի եպիսկոպոսների ձեռքով, քանի որ նիկիական կանոնով՝ օրինական էր դիտվում երեք եպիսկոպոսի ձեռքով ձեռնադրվելը: Սակայն Սիմեոնը կտրուկ մերժեց, քանի որ դա ապագայում նախադեպ կդառնար որեւէ մեկի՝ ինչ-ինչ պատճառներով առանց կաթողիկոսի համաձայնության ու ձեռնադրության եպիսկոպոսանալու: Թերեւս, դա չէր հակասում նիկիական կանոնին, սակայն Հայոց Եկեղեցում օրենքի ուժ

եր ստացել եպիսկոպոսի ձեռնադրությունը կաթողիկոսի ձեռքով: Հասկանալի է, որ ոչ մեկը չէր ուզում, որ այդ կարգը խախտվի, առավել եւս՝ ազգի տրոհված պայմաններում: Սիմեոնը այնքան համառ եղավ իր պատասխանի մեջ, որ Բասմաջյանը նամակ գրեց՝ առաջարկելով կաթողիկոսի կողմից ձեռնադրությունը կատարել Օսմանյան տերության որեւէ քաղաքում կամ թեկուզ՝ Կ. Պոլսում: Հիշյալ ամիրան այս անգամ էլ աշխատեց արգելել Սիմեոնի գալուստն Օսմանյան տերություն՝ հազար ու մի պատճառաբանությամբ: Թե ինչ ձեռով, հայտնի չէ, բայց Սիմեոնի գալն արգելվեց, եւ Բասմաջյանը չկարողացավ իր թերությունից ազատվել ու եպիսկոպոսանալ՝ որպես վարդապետ պաշտոնավարելով ինը տարի:

Սիմեոն Երեւանցու օրոք Մայր Աթոռը ծաղկում ապրեց: Կաթողիկոսը մեծապես փայլեց իր շինարարական գործունեությամբ: Նա պարսպապատեց ամբողջ վանքը եւ անասնատները, քանի որ դրա բացակայության պատճառով շատ գողություններ էին լինում՝ հատկապես ամռան շրջանում, երբ կաթողիկոսը գտնվում էր Երեւանում: Պարիսպն ուներ հաստատուն բուրգեր ու դիտակոնսլեր: Վանքում կառուցվեցին ամռան սեղանատունը՝ սրբատաշ քարով, մոմատունը, դպրատունը, իսկ վեհարանի հարավակողմում՝ մի գեղեցիկ դարպաս, որը Ղազարապատից վեհարանը գնելու հնարավորությունն ի չիք դարձրեց: Զանքանի ջրի ելքերն ավելացնելով՝ նա վանքն ու խցերն ազատեց խոնավությունից: Վերանորոգվեց Մայր տաճարի տանիքը՝ սրբատաշ քարերով: Զարվանսարայի շենքը վերանորոգվեց կանոնավոր շուկայի վանքից դուրս բերելով: Նույնիսկ Վաղարշապատ գյուղի տները, որ շրջափակում էին վանքը, քանդել տվեց՝ բացելով պարսպի շրջակայքը: Իր միջոցներով նոր տներ ու գյուղի եկեղեցին կառուցեց: Ուշադրու-



թյուն դարձրեց Մայր Աթոռի կալված գյուղերի պաշտպանությանը եւ հաստիքաբերությանը: Օշական ազատեց մուղանլու կոչված թուրքերից, որոնք 20 տարի հաստատվել էին այնտեղ: Ազատեց Աշտարակ, Եղվարդ ու Աղավառտուն գյուղերը, որոնք Ջալալբեկյանի ժամանակներից թուրքերի ձեռքն էին անցել: Մուղլին ու Ֆրանկանոցը փոխանակեց Զյուլթեփեի հետ: Նույն հաջողությամբ նա ազատեց Խորվիրայի հողերը բայադ կոչված թուրքերի ոսնձգությունից: Նա կարողացավ խափանել թուրքական Նոր գյուղերի հիմնումը Զյուլթեփեի մոտ գտնվող Այրմուլու բլրի վրա եւ Ղոռուզ գյուղի մոտ գտնվող Իջիւրլի կոչված վայրում: Նա այդ ամենը կատարեց իր կալվածագրերի շնորհիվ: Նրան շատ օգնեց Զյուլթեփե-Ալի խանը, որը կաթողիկոսի միջնորդությամբ բազմիցս դուրս էր արժել դժվարին կացությունից:

Շարունակելի

Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱՍ թղթակից անդամ, պրոֆեսոր

Արքայազն Զարվադ արցելեց Մայր Աթոռ Սբ Էջմիածին



Մայիսի 30-ին Ուելսի արքայազն Զարվադ, ով Հայաստանում է գտնվում «Երեւան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի հրավերով, այցելեց համայն հայության հոգեւոր կենտրոն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին:

Մայր տաճարում արքայազնին ողջունեց Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն արքայազնին ներկայացրեց Հայոց Եկեղեցու պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյան-

քում եւ կարելի դերակատարությունն ազգային ինքնության պահպանման, անկախ պետականության վերականգնման գործում: Նորին Սրբությունը նաեւ անդրադարձավ միջեկեղեցական հարաբերություններին՝ մասնավորապես ներկայացնելով Հայ եւ Անգլիկան Եկեղեցիների միջեւ առկա համագործակցությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ արքայազն Զարվադ այցելեցին Մայր տաճարի ավանդատուն-թանգարան,



որ Ուելսի արքայազնը ծանոթացավ Հայ Եկեղեցու կողմից պահպանվող հոգեւոր եւ մշակութային արժեքներին:

Վեհափառ Հայրապետը եւ Ուելսի արքայազնը միասին շրջեցին նաեւ Մայր Աթոռի տարածքում, այցելեցին Սբ Վարդան եւ Սբ Հովհաննէս Մկրտիչ մատուռ-մկրտարան: Շրջայցի ընթացքում արքայազնին ներկայացվեց Մայր Աթոռ Սբ Էջմիածնի գործունեությունը:

Ուելսի արքայազն Զարվադ եղավ նաեւ «Վաչե եւ Թամար Մա-

նուկյան» մատենադարանում, որ ի պատիվ արքայազնի՝ տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի բարերարներ տեր եւ տիկին՝ Վաչե եւ Թամար Մանուկյանները, տիար Արմեն Սարգսյանը, տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Դիդիգյանները:

Հայաստան այցի ընթացքում արքայազն Զարվադ եղավ նաեւ մի շարք սրբավայրերում՝ Խորվիրապում, Չվարթնոցում, Գեղարդավանքում եւ Հռիփսիմե վանքում:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մասնակցեց «Թանգարանների գիշեր» միջոցառմանը

Մայիսի 18-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի թանգարաններն առաջին անգամ մասնակցեցին «Թանգարանների գիշեր» միջոցառմանը: Այդ առիթով Մայր տաճարի ավանդատուն-թանգարանում բացվեց «Նվիրական խորհրդանշաններ, պարզեւներ եւ շքանշաններ» խորագրով երկօրյա ցուցահանդեսը:

Այս ցուցահանդեսում առաջին անգամ ներկայացվեցին Ամենայն Հայոց հայրապետների անձնական խաչերը, պանակներն ու արժեպատիվ պարանոցազարդերը, ինչպես նաեւ Հայոց Եկեղեցու պատվո բարձր շքանշանները եւ եկեղեցական ու պետական այն պարգևները, որոնք տարիների ընթացքում քույր Եկեղեցիների հոգեւոր պետների ու տարբեր պետությունների ղեկավարների կողմից տրվել են Ամենայն Հայոց Կաթողիկոսներին՝ Վազգեն Առաջին, Գարեգին Առաջին եւ Գարեգին Երկրորդ հայրապետներին:

Միջոցառման շրջանակներում Միածնաեջ Մայր տաճարում Մայր տաճարի քառաձայն երգչախումբը՝ խմբավարությամբ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Շարաթյանի, հանդես եկավ հայ եւ արեւմտաեվրոպական կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարմամբ: Այնուհետեւ տեղի ունեցավ երգեհոնային համերգ (երգեհոնահար՝ Թերեզա Ոսկանյան): Երգչախմբային եւ երգեհոնային կատարումներին ներկա էին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Միջոցառումն ավարտվեց Հանգստյան ժամերգությամբ:

ԱՐՅԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Հայ ազատագրական շարժման տա-րեգրության մեջ բացառիկ դրամատիկ ու հերոսական կերպար է Վարդան Գոլոշյանը:

Վ. Գոլոշյանը ծնվել է 1867 թ. հոկտեմբերի 28-ին Թիֆլիսում: Մի համեստ ընտանիքի զավակ էր եւ ընտանիքի սիրելին: Մանկուց մեծապես հարգել ու պաշտել է ծնողներին: Գոլոշյանների ընտանեկան հարկի ներքո խոր արմատներ ունեին ազգային նվիրական ծեսերն ու սովորույթները:

Տասներկու տարեկանից՝ 1877-79 թթ., Վարդանն ուսումնառում է հանրահռչակ Ներսիսյան դպրոցում:

Այնուհետեւ ուսումը շարունակում է Թիֆլիսի ազդեցիկ գիմնազիաներից մեկում, ուր մտնում է մինչեւ 1882 թվականը:

Իսկ ապրած ժամանակաշրջանը հարուստ էր ռուս-թուրքական հերթական պատերազմի եւ բալկանյան ժողովուրդների հերոսաշունչ ապստամբությունների տպավորություններով ու վսեմ իդեալներով: Այդ տարիներին մի անսովոր ոգեւորություն էր տիրում Կովկասի հայ գրական-հասարակական ու քաղաքական շրջաններում: Այդ օրերին «... գրական ասպարեզում փայլում էր Բաֆֆին. այդ համակրելի մարդու գործունեությունը ղեկավարում էր մի մեծ գաղափար՝ Հայաստանի ազատութեան գաղափարը: Նրա ընթերցանությունը ներշնչեց ինձ վառ ու ազնիւ սեր դեպի ազգ ու հայրենիք, դեպի տառապեալ հայութիւնը»,- իր նամակում գրել է Վ. Գոլոշյանը (*Ս. Նիրվանեան, Յեղափոխականներ, Ժնեւ, 1905 թ. էջ 6*):

Տասնհինգ տարեկանում Գոլոշյանն ընդունվում է Մոսկվայի Լազարյան ճեմարան, որի ընդհանուր մարդասիրական ու հայրենասիրական ոգին բարենպաստ ազդեցություն է թողնում նրա վրա: Պատանին տարվում է հայրենիքի ազատու-

թյան վսեմ գաղափարներով, գրում ոտանավորներ եւ պիեսներ:

Սակայն շուտով նրա համար նեղ ու սահմանափակ դարձավ ճեմարանը, եւ մի քանի անգամ փորձեց փախչել այնտեղից:

Ի վերջո, մեկընդմիջտ Արեւմտյան Հայաստան մեկնելու իր մեծ նպատակը հայտնեց ճեմարանի վարչությանը: Այդ մասին տեղեկացրին նաեւ ծնողներին: Հայրը եկավ Մոսկվա, եւ որդու հետ միասին վերադարձան Թիֆլիս: Ծնողները ձգտում էին նրան հեռու պահել այդ մտադրություններից, եւ նրանց համառ ջանքերով Վարդանին կրկին ընդունեցին Թիֆլիսի գիմնազիան:

Բայց զուր էին այդ ջանքերը: 1883 թ. Գոլոշյանը կրկին հեռացավ եւ այս անգամ՝ բավական երկար ժամանակով: Թողած երկտողում ծնողներին հայտնում է իր նպատակը՝ գնալ Տաճկահայաստան եւ նվիրվել հայոց ազատագրական շարժմանը: Չինվորագրվում է ազգի ազատության համար մղվող պայքարին: Լինում է ռուս-պարսկական սահմանի վրա գտնվող մի շարք բնակավայրերում, այնուհետեւ հասնում է Սալմաստ եւ հաստատվում Հաֆթվան գյուղում, որը դառնում է նրա սիրած կայանն ու ապաստարանը:

Մի քանի ամիս այնտեղ մնալուց հետո նա պատրաստվեց առաջին անգամ ուղք դնել այն երկիրը, որտեղից մշտապես արյան հոտ է բուրում: Ճանապարհին հազար ու մեկ վտանգ հաղթահարելով՝ մտնում է Վան, ուր սկսում է իր քարոզչական գործունեությունը: Վանից ծնողներին գրած նամակում կան այսպիսի խռովահույզ տողեր. «Ես ուրիշ թանկագին եւ հազուադեպ բան չունիմ, որ ուղարկեմ ձեզ. ընդունեցեք, ուրեմն, ձեր թշուառ Հայաստանի տխրագին աւերակների ողջոյնը» (*Նույն տեղում, էջ 13*):

Վանում նա երկար չմնաց եւ նորից ուղեւորվեց դեպի Սալմաստի Հաֆթվան



Մկրտիչ Փորթուզայան

գյուղ, ուր կարողացավ ազգային-հայրենասիրական ոգով վարակել շատերին: Այստեղ նա երկրորդ անգամ հանդիպում է **Մկրտիչ Փորթուզայանին** (*ծնվել է 1848-ին Վ. Պոլսում, մահացել 1921-ին՝ Մարտելում: Գաղափարախոս եւ հայ ազատագրական անկառու գործիչ: Եղել է հայկական առաջին կուսակցություններից մեկի՝ «Արմենականների» հիմնադիրներից, պոետ, հրապարակախոս: Կողմնակից է եղել պարտիզանական շարժման: Արեւմտյան Հայաստանում գործել է Վան քաղաքում*) եւ երկար ու հանգամանալից գրուցում վերջինիս հետ, ով այդ պահին Վանից Սալմաստ էր ժամանել (*տե՛ս Յ. Մ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից (1850-1900), Ե., 1988 թ. էջ 235*): Գոլոշյանը հայտնում է զինվորական խումբ կազմելու եւ ամբողջ Արեւմտահայաստանով շրջելու իր նպատակի մասին, կոմիտեի եւ արթնացնելու նիրհած հայությանը: Փորթուզայանն անչափ հավատում է երիտասարդ հեղափոխականի գաղափարական անդրովելի նվիրվածությանը եւ խոստանում օժանդակել:

Գոլոշյանը, խրախուսված այդ խոստումներից, որոշ ժամանակ անց մեկնում է Վան, սակայն չի գտնում Փորթուզայա-

նին. նրան արդեն վտարել էին: Հուսահատ Գոլոշյանն ուղեւորվում է դեպի Մուշ, որից հետո կրկին վերադառնում է Հաֆթվան եւ մի տարի լիովին տրվում կրթական գործին:

1886 թ. աշնանը նրա ջանքերով բացվում է Հաֆթվանի գրասիրաց ընկերությունը եւ կենտրոնական գրադարան-ընթերցարանը:

1887 թ. Գոլոշյանը ժամանում է Թիֆլիս: Սակայն շատ չանցած նա նորից մեկնում է Արեւմտահայաստան՝ այս անգամ ընդմիջտ: Հետագայում հորն ուղարկած նամակում գրում է. «Ես անկարող եմ զգում անտես անել հայրենիքի շահերը, իսկ այդ շահերին անձնատուր լինելովս ձեզ մեծ դժբախտութիւն եմ հասցնում... Ես որոշեցի ձեզ մեծ դժբախտութիւն տալ, որպէսզի շատ ընտանիքների արտասուքը սրբել կարողանամ» (*Ս. Նիրվանեան, նշվ. աշխ., էջ 20*):

Այս շրջանում Գոլոշյանը հանդիպում է Հովհաննէս Ազրիպայանի եւ Կարապետ Կուլաքսյանի հետ, ինչը բախտորոշ նշանակություն է ունենում հետագա ձեռնարկների համար:

Հ. Ազրիպայանը ծնվել է Վանում, մուտավորապես՝ 1886 թ., բավական հարուստ ու ազդեցիկ ընտանիքում: Հայրը խիստ առաջադեմ անձնավորություն էր՝ անկեղծ ու շիտակ բնավորությամբ: Մի օր Արծակից Վան վերադառնալիս նա բռնվում է քրդերի կողմից եւ բարբարոսաբար նահատակվում: Փոքրիկ Հովհաննէսի, երկու եղբայրների ու քույրերի խնամքն ընկնում է մոր ուսերին: Ընտանիքին աջակցում էր իրենց հոր լավագույն բարեկամը՝ հորիմյան Հայրիկը, որը չթերացավ իր ընկերական ու բարեկամական պարտավորություններում:

Հովհաննէսը եղբայրներից ամենից կրտսերն էր, բայց ամենից քաջն ու խիզախը: Մեծ եղբայրը՝ Կարապետ Ազրիպայանը, նույնպես դարձավ հեղափոխական եւ մահացավ թուրքական ու ռուսական բանտերում ստացած թոքախտից:

Շարունակությունը՝ էջ 7



Մայր Աթոռում տեղի ունեցավ Հայոց եղեռնի 100-րդ տարելիցի հանձնախմբի ժողովը

Մայիսի 15-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում գումարվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստեղծված՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների կազմակերպման հանձնախմբի ժողովը՝ Նախագահությամբ հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Հովհանն արք. Տերտերյանի:

Չեկույցով հանդես եկավ հանձնաժողովի ատենապետ, Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը: Հանձնաժողովի աշխատանքների վերջնական արդյունքների հիման վրա սրբազան հայրը ժողովականներին ներկայացրեց թվով քսաներեք առաջարկ, որոնք վերաբերում էին ինչպես Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների նախապատրաստմանը, այնպես էլ՝ իրականացման աշխատանքներին:

Ժողովի ներկայացուցիչները, հանգամանորեն քննարկելով առաջարկությունները, ամբողջացրին դրանք՝ ներկայացնելու համար Վեհափառ Հայրապետի վավերացմանը:

Մայր Աթոռում տեղի ունեցավ միջեկեղեցական-աստվածաբանական խորհրդի նիստ

Մայիսի 20-ին Մայր Աթոռում գումարվեց Սբ Էջմիածնի միջեկեղեցական-աստվածաբանական խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում քննության առնվեցին միջեկեղեցական, հասարակական եւ ներեկեղեցական տարաբնույթ հարցեր:

Չեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հովակիմ եպս Մանուկյանը՝ տեղեկացնելով 2013 թ. հուլիս ամսին Բուդապեշտում կայանալիք Եվրոպական Եկեղեցիների կոնֆերանսի 14-րդ եւ 2013 թ. նոյեմբեր ամսին Բուսանում կազմակերպվելիք Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 11-րդ համաժողովների գումարման մասին: Զննարկվեցին Հայ Եկեղեցու պատվիրակության կազմի, ժողովներում առաջադրված նյութերի վերաբերյալ հարցերը, եւ հստակեցվեցին ընդհանուր մոտեցումները:

Խորհուրդը լսեց նաեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեորգ եպս Սարոյանի զեկույցը՝ մայիսի 16-ին ճեմարանի եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի միջեւ ստորագրված համաձայնագրի վերաբերյալ: Խորհրդի անդամները ողջունեցին համաձայնագրի ստորագրումը՝ գոհունակություն հայտնելով Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու միջեւ խորացող համագործակցության առթիվ:

Խորհուրդն անդրադարձավ նաեւ օրեր առաջ՝ մայիսի 10-11-ին, Երեւանի Ամերիկյան համալսարանում տեղի ունեցած «Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունների մոդելները. ժամանակակից միտումներ» միջազգային գիտաժողովին: Արձանագրվեց, որ գիտաժողովի կազմակերպիչները գիտաժողովին մասնակցելու պաշտոնական հրավեր չեն ուղարկել Մայր Աթոռին, եւ դատապարտելի համարվեց այս առնչությամբ կազմակերպիչների կողմից ապատեղեկատվության տարածումը: Խորհուրդը նաեւ ապակառուցողական համարեց, որ կազմակերպիչները գիտաժողովի գումարման աշխատանքներում չեն գործակցել Հայ Առաքելական Եկեղեցու հետ, երբ գիտաժողովում ընդգրկված էին նյութեր, որոնք ուղղակիորեն առնչվում են Հայ Եկեղեցուն: Աստվածաբանական խորհուրդն անընդունելի համարեց նաեւ գիտաժողովի ըն-

թացքում հնչեցված միակողմանի գնահատումներն ու ոչ ամառկայական տեսակետները, որոնք չեն կարող նպաստել երկրի հոգեւոր-կրոնական կյանքում համերաշխ եւ գործակցային մթնոլորտի ձեւավորմանը եւ լուրջ մարտահրավեր են դառնալու Հայաստանում՝ խղճի ազատության իրավունքի իրացման ճանապարհին:

«Քրիստոնյաների ներկայությունը եւ վկայությունը Մերձավոր Արեւելքում» թեմայով համագումար Բեյրութում

Մայիսի 21-25-ը Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում տեղի ունեցավ «Քրիստոնյաների ներկայությունը եւ վկայությունը Մերձավոր Արեւելքում» թեմայով միջազգային համագումար՝ կազմակերպված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Մերձավոր Արեւելքի Եկեղեցիների խորհրդի կողմից: Համագումարին մասնակցեց Միջին Արեւելքի, Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի եւ Աֆրիկայի Եկեղեցիների ու Էկումենիկ կազմակերպությունների շուրջ 200 ներկայացուցիչ:

Զննարկումների հիմնական նպատակը տարածաշրջանում զարգացումների վերլուծությունն ու Միջին Արեւելքի երկրներում ստեղծված դրության վերաբերյալ Միջին Արեւելքի Եկեղեցիների, ինչպես նաեւ Էկումենիկ ընտանիքի դիրքորոշումների հստակեցումն էր: Համագումարի մասնակիցներն իրենց մտահոգությունն արտահայտեցին քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ դրսեւորվող բռնությունների եւ տարածաշրջանից քրիստոնյա բնակչության նկատելի արտագաղթի առիթով:

Կոնֆերանսի ավարտին ընդունվեց հռչակագիր, որով կարեւորվեց տարածաշրջանում հանդուրժողականության մթնոլորտի վերականգնումը, կրոնական համայնքների խաղաղ համակեցությունը, ինչպես նաեւ շեշտվեց քրիստոնյա համայնքի պաշտպանությանն ու պահպանմանն ուղղված տարբեր միջոցների գործադրման անհրաժեշտությունը:

Մայր Աթոռ Սբ Էջմիածինը համագումարին ներկայացնում էին Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը եւ հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն Կարեն Նազարյանը:

Լրատվական նյութերը՝

ՄԱՅՐ ԱԹՐՈՍ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

«Մանուկ-կսրիճ» փառական հերոսը բուլչակյան հայրեններում

Ամեն մի ժողովուրդ իր պատմության ընթացքում ստեղծում է այնպիսի արժեքներ, որոնք իր հոգեւոր նկարագրի ճշմարիտ արտահայտությունն են:

Մեր միջնադարյան գրական անդաստանում կան երեք մեծեր՝ Գրիգոր Նարեկացի, Նահապետ Զուլալ եւ Սայաթ-Նովա: Նրանցից Նահապետ Զուլալն իր ամբողջ մեծությամբ երեւան հանվեց միայն Ա. Չոպանյանի (Ա. Չոպանեան, Նահապետ Զուլալի Դիւանը, Փարիզ, 1902) շնորհիվ՝ գրավելով մեր ազգային պանթեոնի ամենավեճ բարձունքներից մեկը:

Մինչ Չոպանյանը՝ Արիստակես Վարդապետ Տեւկանցը դեռ 1882 թ. իր «Յայերը, մեղեդիք, տաղը եւ երգ» գրքի մեջ հրատարակել էր Զուլալի հայրեններից: Սակայն ինչպես նրանք, այնպես էլ խնդրին այս կամ այն հայեցակետերից անդրադարձած ուսումնասիրողները, Նահապետ Զուլալի անձնավորության եւ ապրած ժամանակի մասին լիարժեք տեղեկություններ չեն հաղորդում:

Գիտնականների մի խումբ, ինչպես հայտնի է, չընդունեց, որ Զուլալը հայրենների հեղինակն է: Մ. Աբեղյանն իր «Յին գուսանական ժողովրդական երգեր» աշխատության մեջ այն տեսա-

կետն է հայտնում, թե հայրենները մի մարդու ստեղծագործություններ չեն, որ դրանք ստեղծվել են գուսանների կողմից եւ, ժողովրդի մեջ տարածվելով, գոյացել են տարբերակներ ու հասել մինչեւ մեր օրերը: Այս տեսակետը կիսում է նաեւ Ասատուր Մաքակալյանը (Ա. Մաքակալյան, Յայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ներածություն, Եր., 1956):

Ընդունելով արեղյանական տեսակետը՝ մենք, այսուհանդերձ, պնդում ենք, որ Զուլալյան հայրեններն անհատական բնույթ ունեն: 16-րդ դարում ապրել էլ ստեղծագործել է մեծ բանաստեղծ Նահապետ Զուլալը: Նա գրել է հայրեններ, որոնք հայ եւ համաշխարհային գրականության գոհարներից են: Նրա բանաստեղծությունները շատ են սիրվել ժողովրդի կողմից եւ մեծ տարածում գտել՝ վերածվելով երգերի՝ իրենց տարբերակներով: Զուլալյան հայրենները ժողովրդական-գուսանական երգերի հետ շփոթելու պատճառ է դարձել նրա ստեղծագործությունների շեշտված, խոր ժողովրդայնությունը: Երկա հողվածում հայրեններն ու գուսանական երգերը ներկայացվում են ընդհանուր բաժնի մեջ, ինչպես այդ արել է

Աս. Մաքակալյանը՝ ընդամին առանձնակի դիտարկելով հայրենները՝ իբրեւ յուրատեսակ ստեղծագործություններ: Զուլալյան հայրենների ներքին գեղեցկությունը տեսել են ռուս եւ եվրոպացի շատ անվանի գիտնականներ՝ անգամ ընդգծելով դրանց ժողովրդական ոգին եւ շունչը: Նա իր զգացումների արտահայտության մեջ անկախ է եւ ավելի մոտ է փողոցի ամբիսին, քան պալատական սանդղակներին: Նրա ձայնը հնչում է ոչ թե «աշխարհի հզորների» համար, այլ ժողովրդական հավաքույթներում: «Միակ Սուլթանը, որի առջեւ Զուլալը գլուխ ծռեց, դա իր հավիտենական եւ ամենագործողին եղավ,- Սերը» (տե՛ս Ա. Մաքակալյան, Յայրեններ, Եր., 1995):

Անչափ կարեւոր է հայրենների առաջացման հարցը, որը հուզել է այս ժանրով զբաղվողներից յուրաքանչյուրին:

Այն գիտականորեն լուսաբանել է Մ. Աբեղյանը՝ իր «Յին գուսանական ժողովրդական երգեր» մենագրության մեջ: Ինչպես ժողովրդական էպոսի, այնպես էլ ժողովրդական քնարական բանաստեղծության վերաբերյալ Աբեղյանը զարգացրել է մի տեսություն, ըստ որի՝ թե՛

«Սասնա ծռերը», թե՛ հայրենները ձեւավորվել են նախ եւ առաջ հայոց բարձր ազնվականության միջավայրում, նախարարական հայտնի տներում: Ընդ որում, թե՛ էպիկական եւ թե՛ քնարական այդ ստեղծագործությունների հեղինակներն ու կատարողները եղել են պրոֆեսիոնալ գուսաններ: Յետագայում, ըստ Աբեղյանի, այս երգերն ու վեպերը դուրս են եկել ազնվականական նեղ շրջանակներից, ապարանքներից ու ամրոցներից եւ մտել ժողովրդական լայն խավերի մեջ: Այսպես նրանք ժողովրդականացել են, նույնիսկ ձեռք բերել ժողովրդական բնույթ՝ շատ եզրերով կորցնելով իրենց նախնական նկարագիրը: Ինչ վերաբերում է հատկապես հայրեններին, Աբեղյանը դրանց զարգացման առաջին շրջանը կապում է Բագրատունյաց, Արծրունյաց եւ 10-11-րդ դարերում գոյություն ունեցած հայկական մյուս թագավորությունների ու իշխանական տների ծաղկուն շրջանի հետ (Վ. Բրյուսով, Յայաստանի եւ հայ կուլտուրայի մասին, Եր., 1967, էջ 94): Գուսանը հայ ազնվականների ու պարոնների ուրախ ու ճոխ կենցաղավարության, խնջույքների անբաժան մասնակիցն է եղել՝ իր արվես-



տով սպասավորելով նրանց: Այսպիսով՝ ակնհայտ է, որ հայրեն բանաստեղծության առաջին ստեղծողները եղել են մասնագետ գուսանները, որոնց մասին հիշատակություններ կան դեռևս Փ. Բուզանդի եւ Մ. Խորենացու պատմագրքերում: Այդ գուսանները գործում են նաեւ «Սասնա ծռեր» էպոսում:

Ըստ Աբեղյանի՝ հայրենները հորինվել են քերականից եւ կոչվել նաեւ «հայրեն վասն ուրախութեան» (Մ. Աբեղյան, Յին գուսանական ժողովրդական երգեր, Երկեր, հ. Բ, Եր.: 1967, էջ 157-222):

Շարունակությունը՝ էջ 6

«**Ե**վ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն»

Մատթ. ԻՂ 11

21-րդ դարը գիտական եւ տեխնոլոգիական նվաճումների, քաղաքական, տնտեսական տեղաշարժերի, մշակութային ձեռքբերումների եւ արժեհամակարգերի փոփոխության ժամանակաշրջան է: Առաջընթացի կողքին առավել նկատելի են դառնում բացասական երեւույթներն ու գործընթացները. չենք կարող ժխտել, որ հեռացել ենք Աստծուց, քրիստոնեական ճշմարիտ վարդապետությունից, հոգեւոր արժեքներից, դարձել առավել սնոտիապաշտ, ունայնամիտ: Գիտական, գրական արժեք ներկայացնող գրքերի փոխարեն ամենուր հանդիպում ենք տրատեսակ հորոսկոպների, աստղագուշակների, երազահանների, համաստեղության նշաններով զարդերի ու թալիսմանների: Անգամ հեռուստատեսությունն է, կարծես դիտավորությամբ, հետաքրքրություն առաջացնում աստղագուշակության, հեռազգայության նկատմամբ. ակամայից հիշում են աստվածաշնչյան խոսքերը. «Սակայն ունայն են մարդկանց որդիները, սուտ են որդիները մարդկանց, իրենց կշռով անարդար են, եւ իրենք ամենքն էլ ունայնության մեջ են» (Սաղմ. ԿԱ 10):

Այսօր աստղագուշակներից շատերն իրենց համարում են ճշմարիտ եւ աստվածավաք քրիստոնյաներ, իսկ գուշակությունը՝ Աստծո կողմից տրված շնորհ: Մինչդեռ ճշմարիտ քրիստոնյան նա է, ով հավատում է հետեւում է Յիսուս Զրիստոսին, ընդունում նրա վարդապետությունը, ուսուցումները: Եթե որեւէ մեկը շեղվում է հեռանում է ճշմարիտ հավատից, Աստծո խոսքից, չի կարող «ուղղադավան քրիստոնյա եւ հավատացյալ» համարվել:

Քրիստոնեական դավանաբանությունը հստակ ամրագրված է Առաքելական առաջին երեք տիեզերածրոյների (Նիկեա՝ 325 թ., Կ. Պոլիս՝ 381 թ., Եփեսոս՝ 431 թ.) հավատո հանգանակներում: Վերոնշյալ հանգանակներում սահմանված

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ



են դավանաբանական այն սկզբունքները, որոնք քրիստոնեության հիմնայուններն են: Եկեղեցին տարբերակել է մերժել է քրիստոնեական դավանաբանությանը հակասող կեղծ ուսմունքներն ու մոտեցումները: Ընդհանուր դոգմատիկ ձեւակերպումներից շեղված ընկալումներն ու մեկնությունները համարվել են հերետիկոսություն, իսկ նրանց հետեւորդները՝ հերետիկոսներ կամ աղանդավորներ:

Քրիստոնեական վարդապետության անկյունաքարը մշտապես եղել է Ավետարանը: Առաքյալները մտահոգ էին, որ ժամանակի ընթացքում այն կարող է խեղաթյուրվել ստահող մեկնություններով: Նրանք եկեղեցուն հանձնարարեցին նգովել կեղծ ուսուցումներ տարածողներին. «Եթե նույնիսկ մենք կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ ավելին, քան այն, որ մենք ավետարանեցինք ձեզ, նգովյալ լինի» (Գաղ. Ա 8):

Ելնելով պատմական եւ ավետարանական ուսուցման այս դիտանկյունից՝

քննարկենք քրիստոնեության եւ աստղաբանության հարաբերության հիմնահարցը:

Չնայած շատ աստղաբաններ իրենց անվանում են քրիստոնյաներ, սակայն մշտապես հակված են ձեւախեղելու աստվածաշնչյան ուսուցումները: Օրինակ՝ հայտնի աստղաբան Դեմիո Լոզանը պնդում է, որ Յիսուսը մարդկության Փրկիչը չէր, մերժում է նաեւ Ադամին ու Եվային, համաշխարհային շրիեղեղին վերաբերող սուրբգրային հատվածները, սակայն գոհունակությամբ է խոսում հակաքրիստոսի ապագա գալստյան մասին: Մեկ այլ նշանավոր աստղաբան Լինդա Գուդմանը փորձում է հիմնավորել, որ Քրիստոսն Աստծո Որդին չէր, այլ սովորական մահկանացու. առաջարկում է վերադառնալ պարզունակ բազմաստվածությանը եւ նույնիսկ փորձում է «համոզել», որ Ադամի ու Եվայի անհնազանդությունն Աստծո համար ամենեւին էլ մեղսագործություն չէր: Ճիշտ է՝ յուրաքանչյուրն ունի հավատն ու դավանանքի ազատության իրավունք, իրեն բնորոշ պատկերացումներ, սակայն վերոնշյալ տեսակետները, անտարակույս, չեն կարող ընդունելի լինել քրիստոնյայի համար: Յովհաննես առաքյալը, խոսելով նման դեպքերի մասին, զգուշացնում է. «Իսկ ո՞վ է ստախոսը, եթե ոչ նա, ով ուրանում է, թե Յիսուսը Քրիստոսն է: Նա՛ է Նեմը, ով ուրանում է Յորը եւ Որդուն» (Յովհ. Բ 22):

Սուրբգրային բազմաթիվ հատվածներում Աստված դատապարտում է աստղագուշակությունը: Սբ Գիրքը Արարչի խոսքն է, իսկ քրիստոնյան անվերապահորեն հավատում է այդ խոսքին, ուստի նա չի կարող հետեւել այնպիսի հավատալիքների եւ երեւույթների, որոնք նգովյալ են: Քրիստոնեությունը մերժում է աստղագուշակությունը. այն իր ծագմամբ բազմաստվածային հավատալիքի դրսեւորում է: Աստղագուշակությունը պատմականորեն

ձեւավորվել է երկնային լուսատուների հեթանոսական պաշտամունքից: Աստղերը համարվում էին աստվածություններ, որոնք ունեին մարդկային ճակատագրերը տնօրինելու կամք եւ զորություն: Փաստորեն աստղաբանության կրոնական հիմնասյունը բազմաստվածությունն է, որը խստորեն արգելվում է Սբ Գրքում: Անտիկ բազմաստվածային հավատալիքները կամ կռապաշտությունը չեն կարող մոլորեցնել ճշմարիտ քրիստոնյային:

Մի խումբ աստղագուշակներ փորձում են «հիմնավորել», թե Եկեղեցին հատուկ նպատակով որոշ գրքեր բացառել են դուրս է թողել սուրբգրային կանոնից: Կարելի է ենթադրել, որ այդ գրքերում նշվում է, թե իբր Յիսուսը զբաղվում էր աստղագուշակությամբ: Ժամանակակից աստղաբանների որոշ աշխատություններ՝ «Քրիստոսի անհայտ կյանքը», «Ջրիսի ավետարան», որոնք զուրկ են գիտական հիմնավորումից, նման ստահող համոզմունքներ են բովանդակում:

Նոր Կտակարանի նշանավոր ուսումնասիրողներից դոկտոր Էդգար Գուդսպիդը (Չիկագոյի համալսարան) իր «Ժամանակակից ապոկրիֆները» (Բոստոն, 1956 թ.) աշխատության մեջ անդրադարձել է վերոնշյալ գրքերին: Նա մանրամասնորեն ապացուցում է, որ դրանք գիտական որեւէ արժեք չեն ներկայացնում եւ բովանդակում են պատմականորեն չհիմնավորված եւ կեղծ տեղեկություններ, մեկնաբանություններ:

Աստված աներկբայորեն արգելում է նաեւ ոգեհարցությունը (օկուլտիզմ): Օկուլտիզմը մի ուսմունք է, սնոտիապաշտական պատկերացումների մի համակարգ, ըստ որի՝ գոյություն ունեն խորհրդավոր, գերբնական, անդրաշխարհային ուժեր, որոնք անհասանելի են բանականությանը. դրանք կարող են զգալ եւ ճանաչել միայն, այսպես կոչված, «ընտրյալները, լուսավորյալները», որոնք «հոգեբանական պատրաստվածության» երկար ճանապարհ են անցել: Օկուլտիզմի հետ են կապված մոգության եւ գուշակության տարատեսակները, ոգեհարցությունը, աստվածիմացությունը (Энциклопедия социологии, М., 2009):

Շարունակությունը՝ էջ 8

ԱԹ-ԹԱՆԱՀԻ

Սկիզբը՝ թիվ 9

Բոլորս միասին գնացին զորապետի մոտ, որ ապրում էր դերձակից ոչ հեռու: Ծանապարհին փոքր-ինչ ետ մնացի եւ ասացի բարեկամիս. «Դու շատ տհաճ գործ ձեռնարկեցիր, մեզնից բացի՝ ներգրավեցիր նաեւ այս ծերունուն: Նրան ուղղակի կլկեն, երբ մոտենա իմ պարտապանի դռանը. նրա հետ՝ նաեւ մեզ: Չէ՞ որ այսփնչը, այնփնչը եւ նույնիսկ վեզիրը փորձեցին այցելել այս զորապետին, բայց ոչ մեկին նա ուշք չդարձրեց: Նա ինչո՞ւ պիտի անհանգստանա ինչ-որ դերձակի պատճառով:

Բարեկամս ծիծաղելով պատասխանեց. «Ոչի՞նչ, ոչի՞նչ, արի եւ բնավ մի անհանգստանա»:

Երբ մոտեցանք զորապետի տանը, դերձակին տեսնելով՝ ծառաներն սկսեցին ամեն կերպ պատիվ ցույց տալ, հասան համբուրելու նրա ձեռքը, բայց նա թույլ չտվեց: Այնժամ նրանք ասացին. «Քեզ ի՞նչն է այստեղ բերել, ո՞վ շեյխ: Տերը դուրս է եկել, բայց եթե քեզ համար ինչ-որ բան կարող ենք անել, ասա՛, եւ մենք իսկույն կկատարանք ամեն ինչ: Իսկ եթե ոչ՝ ապա ներս արի եւ սպասիր նրա վերադարձին»:

Այսպիսի ընդունելությունն ինձ հուսադրեց: Մենք մտանք տուն եւ նստեցինք: Ծուռով հայտնվեց տերն ինքը եւ տեսնելով դերձակին՝ ողջունեց մեծ հարգանքով եւ ասաց. «Նախքան հագուստս փոխելը՝ պատրաստ եմ լսելու՝ ինչ կտնօրինես»:

Դերձակը նրա հետ խոսեց իմ գործի մասին: Եվ զորապետն ասաց. «Երդվում եմ ալլահով, տանը ունեմ հինգ հազար դիրհեմից ոչ ավելի: Վերցրեք այդ գումարը, նաեւ ոսկե ու արծաթե ձիասարքը՝ իբրեւ գրավ՝ պարտքի դիմաց, որ կվճարեմ մեկ ամսում»:

Ես սիրով համաձայնեցի, եւ նա բերեց դրամն ու ձիասարքը, որի արժեքը համապատասխան էր պարտքի մնացորդին: Այդ ամենն ընդունեցի, իսկ դերձակին ու բարեկամիս վկա դարձրի մեր պայմանին, ըստ որի՝ պարտքի մնացորդի դիմաց գրավ էր մոտս մնալու մեկ ամիս, իսկ այդ ժամկետն անցնելուց հետո ես ազատ կլինեի վաճառելու սարքը՝ հատուցելով պարտքն ամբողջովին:

Դերձակն ու բարեկամս վկայեցին գործարքը, իսկ երբ վերադարձանք դերձակի տուն, ես նրա առջեւ դրեցի դրամն ու ասացի. «Ո՛վ շեյխ, քո ձեռքով ալլահը վերադարձրեց իմ ինչքը, եւ ես շատ ուրախ կլինեմ, եթե դու ինձից ընդունես դրամի քառորդը, երրորդը կամ կեսը»։ «Դու,- պատասխանեց նա,- շատ ես շտապում բարությանը չարով վճարելու: Վերցրու քո դրամը, եւ թող ալլահն օրհնի քեզ»:

Ես ասացի, որ ունեմ եւս մի խնդրանք, եւ երբ ցանկացավ լսել, խնդրեցի բացատրել՝ ինչո՞ւ զորապետը լսեց նրան, այն դեպքում, որ քամահրանոց մերժել էր ամենաազդեցիկ մարդկանց: «Դու ստացար այն, ինչ ուզում էիր,- պատասխանեց նա,- իսկ հիմա բարի եղիր չխանգարել ինձ զբաղվելու իմ գործով եւ սնունդի համար վաստակելու»:

Բայց ես համառեցի, եւ նա ինձ պատմեց հետեւյալը. «40 տարի ես այս մզկիթում ծառայել եմ, կոչել աղոթքի, սովորեցրել Դուրանի ընթերցում, իսկ ապրուստ վաստակել եմ դերձակությամբ, որովհետեւ այլ բան չգիտեմ: Մի անգամ, տարիներ առաջ, աղոթքից հետո մայրամուտին վերադառնալով տուն՝ նկատեցի մի թյուրք գինվորի՝ իր տան առջեւ կանգնած: Այդ ժամանակ այնտեղով անցնում էր մի գեղեցիկ կին, եւ թյուրքը, որ արբած էր, բռնեց նրան եւ սկսեց քարշ տալ տուն: Կինը դիմադրում էր, օգնություն խնդրում: Բայց՝ ոչ մի տեղից օգնություն, եւ չնայած նրա թախանձանքին՝ նրան օգնող չկար: Ամեն ինչից բացի՝ կինը ճշում էր. «Ամուսինս երդվել է բաժանվել ինձից, եթե մի գիշեր անցկացնեմ տնից դուրս: Եվ եթե մտնեմ այս տուն, ամեն ինչ կորած է, դա ոչ միայն կխայտառակի ինձ, այլեւ կկործանի կյանքս»:

Ես մոտեցա թյուրքին, աշխատեցի կանգնեցնել նրան՝ խնդրելով, որ արձակի կնոջը, բայց նա հարվածեց իմ գլխին գավազանով՝ ծանր վերք հասցնելով, իսկ կնոջն ստիպեց մտնել ներս:

Գնացի տուն, մաքրեցի արյունը, ամուր կապեցի վերքը եւ ուղեւորվեցի երեկոյան աղոթքի, իսկ ավարտին մարդկանց դիմեցի այս խոսքերով. «Ինձ հետ եկեք գնանք ալլահի թշնամու՝ այդ թյուրքի մոտ եւ նրան հանգիստ չտանք, մինչեւ չփրկենք այն կնոջը»:

Բոլորս ելանք գնացինք եւ աղմուկ բարձրացրինք այն տան մոտ: Թյուրքը ծառաների ուղեկցությամբ դուրս եկավ. կատաղած հարձակվեցին մեզ վրա, իսկ ինձ նա հարվածեց շատ ուժեղ, այնպես, որ քիչ մնաց մեռնելի, եւ հարեանները կիսակենդան տուն հասցրին ինձ: Տանը լվացին վերքերս, ես քնեցի, բայց ոչ երկար, քանի որ ցավը չէր թողնում քնել: Կեսգիշերին ես արթնացա ու այլեւս չքնեցի՝ մտածելով պատահարի մասին: Ես ինձ ասացի. «Չավանաբար թյուրքը գիշերն ամբողջ արբեցությամբ տարված՝ չի զգում ժամանակը, եւ եթե ես առավոտյան աղոթքի կանչեմ, նա կմտածի, որ լուսացել է եւ կարձակի կնոջը, այնպես որ վերջինս կհասցնի տուն գնալ գիշերը չվերջացած: Այդպիսով նա կփրկվի երկու դժբախտություններից մեկից, եւ նրա ընտանիքը չի կործանվի ի հավելումս այն ամենի, ինչ նրան պատահել է»:



Ես մեծ դժվարությամբ հասա մզկիթ, բարձրացա մինարե, աղոթքի կոչ հնչեցրի, իսկ հետո նստեցի ու սկսեցի դիտել փողոցը՝ սպասելով, թե կինը դուրս կգա տնից: Որոշեցի՝ եթե նա չհայտնվի, ես կսկսեմ աղոթքը, որպեսզի թյուրքը չկասկածի, որ իրոք լուսացել է, եւ որ ժամանակն է կնոջն արձակելու:

Որոշ ժամանակ անց կինը տակավին թյուրքի տանն էր, իսկ փողոցը լցվեց հեծյալներով ու ջահակիր հետիոտնով, եւ բոլորը գոռում էին. «Ո՛վ էր կանչում աղոթքի, ո՞ւր է նա»:

Սկզբում այնպես վախեցա, որ չէի համարձակվում ձայն հանել, բայց հետո վճռեցի դիմել այդ մարդկանց եւ խնդրել օգնելու կնոջը: Եվ ես մինարեից գոչեցի. «Ես եմ կանչել աղոթքի»։ Այնժամ նրանք ինձ ասացին. «Իջիր եւ պատասխան տուր ուղեւորների իշխանին»:

Մտածելով, թե վերջս եկել է, իջա նրանց մոտ, եւ պարզվեց, որ դա քաղաքային պահնորդ շուկատն է՝ Բաղդի գլխավորությամբ: Սա ինձ տարավ խալիֆ ալ-Մութադդի մոտ: Խալիֆին տեսնելով՝ ես ամբողջապես ցնցվեցի ու դողացի, բայց նա հանգստացրեց ինձ ու հարցրեց. «Ինչո՞ւ ես անհանգստացրել մահմեդականներին՝ նրանց անպատեհ ժամի աղոթքի կոչելով, այնպես, որ նրանք, որ գործ ունեն, դրանով կզբաղվեն ժամանակից շուտ, իսկ ովքեր պիտի պաս պահեն, կերակրից ձեռնպահ կմնան այն դեպքում, երբ կարելի է սնունդ ընդունել»:

Ես պատասխանեցի. «Եթե ուղեւորների առաջնորդը խոստանա կյանքս խնայել, նրան կասեմ ամբողջ ճշմարտությունը»:

Խալիֆն ասաց, որ կյանքիս ոչինչ չի սպառնում: Այնժամ նրան պատմեցի ամեն ինչ թյուրքի մասին՝ ցույց տալով ծեծի հետքերը մարմնիս, որից հետո խալիֆը Բաղդին հրամայեց անմիջապես բերել թյուրք գինվորին ու կնոջը: Ինձ տարան եւ որոշ ժամանակ անց բերին կնոջն ու թյուրք-

քին: Ալ-Մութադդիը հարցուփորձ արեց կնոջը պատահարի մասին, եւ նա պատմեց նույնը, ինչ՝ ես: Այդ ժամանակ ալ-Մութադդիը Բաղդրին հանձնարարեց հուսալի պահնորդով տուն տանել կնոջը՝ հասցնելու ամուսնուն, բացատրելու՝ ինչ է եղել եւ խալիֆի անունից հրամայելու ամուսնուն՝ չվտարել կնոջը եւ ընդունել լավապես»:

Հետո նա կանչեց ինձ եւ իմ ներկայությամբ թյուրքին այսպիսի հարցեր տվեց. «Ի՞նչ ռոճիկ ունես»։ Չինվորը պատասխանեց: «Ի՞նչ պարեն ես ստանում»։ - «Այս»։ «Իսկ լրացուցիչ եկամուտ»։ - «Այսպես»։ Հետո խալիֆը թվարկեց այն ամենը, ինչ այդ գինվորը ծրի ստացել է, եւ թյուրքը խոստովանեց, որ իր եկամուտը շատ մեծ է: Եվ ալ-Մութադդիը

հարցրեց նրան՝ որքա՞ն ստրկուհի ունի: Թյուրքը պատասխանեց: Խալիֆն ասաց նրան. «Մի՞թե այդ ստրկուհիները եւ քո ամբողջ հարստությունը բավական չէ: Ինչո՞ւ ես խախտում ալլահի պատվիրանը եւ արատավորում տիրակալի բարի անունը: Ոչ միայն ապօրինություն ես անում, այլեւ քեզ կարգի բերել փորձող մարդու վրա ես հարձակվում»:

Չինվորը լուռ էր եւ չէր կարող պատասխանել: Այնժամ խալիֆը մի պարկ, կապանքներ ու թակ բերել տվեց: Չինվորին կապեցին, շղթայեցին, մտցրին պարկը, որից հետո ծառաներին հրամայեց խոցոտել նրան թակերով: Այդ ամենը կատարվեց իմ աչքի առաջ: Սկզբում գինվորը ճշում էր, հետո լռեց ու մահացավ: Խալիֆը հրամայեց դիակը նետել Տիգրիս գետը եւ Բաղդրին հրահանգեց գրավել այն ամենը, որ ուներ թյուրքը:

Հետո նա ինձ ասաց. «Ո՛վ ծերունի, եթե երբեւէ տեսնես ինչ-ինչ անօրինություններ, մեծ թե փոքր, պահանջիր դադարեցնել, նույնիսկ եթե խոսքը սրա մասին լինի,- նա ցույց տվեց Բաղդրին,- իսկ եթե պատահի տհաճություն եւ քեզ չլսեն, այնժամ թող իմ եւ քո միջեւ նշան լինի աղոթակոչը մոտավորապես այսպիսի ժամի, իսկ ես, լսելով քո ձայնը, մարդ կուղարկեմ քո տնեից, եւ յուրաքանչյուրին, որ կիրաժարվի լսել քեզ կամ վնաս կպատճառի, կպատժեմ ճիշտ այնպես, ինչպես այս գինվորին»:

Ես շնորհակալություն հայտնեցի ու գնացի:

Հետո բարձրաստիճան անձանց ու ծառաների շրջանում տարածվեց այդ դեպքի լուրը, եւ այդ ժամանակվանից ամեն ոք, ում որ խնդրում եմ արդար վարվել որեւէ մեկի նկատմամբ կամ ձեռնպահ մնալ ապօրինությունից, ենթարկվում է, ի գոհություն ինձ՝ երկուդ կրելով ալ-Մութադդիից, այնպես որ դեռեւս երբեք առիթ չի եղել պայմանավորված ժամին աղոթքի կանչելու:

Արշակ ՄԱՐԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր



Սկիզբը՝ էջ 5

Ո՞վ է հայրենների քնարական հերոսը, այն տիպար-հերոսը, ում շուրջ հյուսվել են այս խորախորհուրդ ու նուրբ երգերը:

Ահա դրանցից մեկը. այստեղ ժողովրդական պարզ անմիջականությամբ պատկերված է «Թուխ Մանուկի» ու «Վարի լեռնէն ի վար» իշնող ջրի երկխոսությունը: Մանուկը բարձր ձյունապատ լեռներից եկող, «պաղուկ ջրիկով» լվանում է ձեռքերն ու երեսը, ապա զրուցում «պաղ ու անուշիկ ջրիկի» հետ, որ գնում է այն գեղեցիկ սիրո այգին, որտեղ «պուլպուլն քաղցր եղանակե»։ Երգի հատկապես վերջին տողերում սիրո հրաշալի պատկեր կա (Ա. Չոպանեան, Հայրեններու բուրաստանը, Փա-

«Մանուկ-կսրիճ» բնարական հերոսը բուհական հայրեններում

րիզ, 1940, էջ 333)։

- Ձո՛ւր, դուն ո՞ր աղբիւր կ'երթաս,
իմ պաղո՛ւկ ջըրիկ անուշիկ:
- Ես ի յայն աղբիւրն երթամ, որ գայ
քո եարն ջուր խմէ,
- Դեմ գընամ դունչըն պազնեմ,
սիրովըն հապա գինանամ:

Սիրուհու՝ շաքարից քաղցր շրթունքները եւ լուսնից էլ գեղեցիկ երեսը համբուրելու ինչպիսի՞ գորավոր ցանկություն կա մի ուրիշ հայրենում (Նույն տեղում, էջ 143)։

- Սիրեմ գայո՞ սիրուն երեսդ, որ լուսին
ի մօտն է գերի,
Պազնեմ գայո՞ բարուկ պըրունոք, որ
շէքերն ի մօտն է լեդի,
Թուխ աչքդ ու կամար ունքերդ քան
ըզծով կու գարնէ ալի,
Բերնիկդ է շիշ նըման, որ վարդին
ջըրովն է ի լի:

Հայրենների մեջ անհազ է սիրո ծարավը. երիտասարդ սիրտը վառվում է սիրուց, սերը Մանուկին հանգիստ չի տալիս (Մ. Ա-

բեղյան, Հին գուսանական ժողովրդական երգեր, էջ 217)։

Աստուած ազատե գմանուկն,
Որ չինկինի ի սեր, զինչ որ ես.
Անողին գուլխն ելնէ,
Ի՛ս աստուծոյ մնայ սեւերես:
Հայրեններից մեկում սիրուց արբած «Մանուկը» գիշերը, երբ «թուխ ամպեր լ՛անուշ կու ցողայ», դուրս է գալիս, տեսնում է իր յարը կանգնած է, եւ կանաչ կապան թըջվում է: Յարը տղայի ձեռքից բռնում, տուն է տանում, դուռը դնում (Նույն տեղում, էջ 175)։

Մանուկ ես նորա կ'ասեմ,
Որ առնու զբալնին ու բանայ.
Բանայ լ՛ի բաղչան մտնի,
Վարդ քաղէ ու ցօղն ի վերայ,
Եւ փունջ մի եարոջըն տայ
Որ դնէ գերեսն ի վերայ:

Այս հայրենի մեկ այլ տարբերակ տեսնում ենք Աբեղյանի՝ վերը նշված աշխատության մեջ: Այստեղ կան տարբերակներ

ունեցող ուրիշ հայրեններ եւս, ինչից կարելի է եզրակացնել, որ դրանք անհատական ստեղծագործություններ են՝ ժողովրդի կողմից սիրված, որոնք բերնից բերան անցնելով՝ սրբացրել են տարբերակներ:

Ահա քուչակյան շարքից մի հայրեն, ուր «կտրիճը» մի համբույր է ուզում սիրածից, որ չմեռնի: Աղջիկը պատրաստ է հազար համբույր տալու, միայն թե «կտրիճը» ուրիշների մոտ չպարծենա (Ա. Չոպանեան, Հայրեններու բուրաստանը, էջ 279)։

- Ա՛յ իմ մարգարտէ շարոց, պազ
մի տուր, որ ես մեռնիմ ոչ:
- Ծո թուխ ու գըռուզ կըտրիճ, պազ
հազար թէ պարծենաս ոչ:
- Յորժամ ի մէջիս նըստիս հարբենաս,
ուղղել կարես ոչ.
- Չպազն ի քեզ պարծանք հաշուես,
գամօթուդ տեղըն գիտես ոչ:

Ճարուկակելի
Վարդան ԵՐԻԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՔՐԻՍՏՈՆԵՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ էջ 5

Ի դեպ, աստղագուշակությունն օկուլտիզմի ճյուղավորումներից մեկի՝ մաստիկայի (հուն. μάστιγ - գուշակություն բառից, գիտակցական վիճակ, երբ դրսևորվում է «մարգարեանալու շնորհը») դրսևորում է: Մաստիկան տարաբնույթ միջոցներով ապագայի կանխագուշակումն է (Философский энциклопедический словарь, М., 2010): Անտիկ շրջանում գուշակության ձևերը բազմաբնույթ էին՝ երազների միջոցով (օկիրոմանտիա), ըստ որոշ թռչունների թռիչքի (աուսպիցիա), կրակով (պիրոմանտիա), ըստ մարդու կառուցվածքի (մորֆոսկոպիա եւ ֆիզիոգնոմիկա), մեռյալների միջոցով (սեկրոմանտիա), երկնային երեւոյթներով եւ լուսատուների դասավորությամբ (աստրոլոգիա), կենդանիների ներքին օրգաններով, ձեռքի ակումբ (խիրոմանտիա) եւ այլն: Գրեթե բոլոր գուշակներն էլ զբաղվում են հոգեչափությամբ (psychometry), մասնակցում ոգեկանչության «արարողակարգին», անբնական ներշնչման, «պայծառատեսության» վիճակում հայտնվում, հաղորդակցվում ոգեմիջնորդների (medium) հետ: Աստղագուշակները եւս պնդում են, որ տարբեր հորոսկոպներ կազմելու համար պետք է օժտված լինել հատուկ «հոգեկան ներքնաշնչով» (ինտուիցիա):

Բազմադարյա հետազոտությունները եւ հնագիտական պեղումներն ապացուցել են Սբ Գրքի անսխալականությունը: Աստվածաշնչի բոլոր մարգարեությունները մշտապես իրականացել են, մինչդեռ աստղաբանների կանխագուշակումները սխալ են եւ

կեղծ: Մասնավորապես աշխարհի վերջի վերաբերյալ հաճախակի շրջանառվող «մարգարեությունները» ակներե դարձրին աստղագուշակության անգոր եւ ոչ ճշմարտացի լինելը: Մովսեսը կանխագուշակումների մասին ասում է. «Եթե ձեր մտքում ասե՛ք՝ «Ինչպե՞ս իմանանք, թե Տերը չի ասել այդ խոսքերը», ապա իմացե՛ք. եթե Տիրոջ անունից մարգարեի ասածը չի կատարվում, չի լինում, ապա դա Տիրոջ ասած խոսքը չէ. մարգարեն ամբարշտությամբ է խոսել, ուրեմն մի՛ թողեք նրան խոսել» (Օրինաց ԺԸ 21-22): Վերջինս ընդգծում է նաեւ, որ Աստծո մարգարեների բոլոր կանխասացությունները նույնությամբ կատարվել են, հետեւաբար դժվար չէ ճանաչել ստախոսներին: Աստղաբաններն իրենց գուշակություններում գրեթե միշտ սխալվում են (պարզապես երբեմն որոշ գուգադիպություններ են լինում):

Նշենք նաեւ, որ գուշակությունները մարդու վրա թողնում են հոգեբանական ծանր, երբեմն էլ անդառնալի հետեւանքներ: Դրանք կարող են հոգեկան ծանր ապրումներ, լարվածություն, խուճապ առաջացնել: Ըստ աստղաբանների՝ մենք «խաղալիք» ենք աստղերի ձեռքին, որոնք կյանքի բոլոր ոլորտներում ղեկավարում են մեզ: Այսպես աստիճանաբար դառնում ենք աստղագուշակների «ստրուկը» եւ ընկնում հոգեբանական կախվածության մեջ. նրանք գուշակում են մեր ապագան, հաջողությունները եւ անհաջողությունները, դժբախտություններն ու երջանիկ լինելու հնարավորու-

թյունը, ամուսնության համար նպաստավոր ժամանակահատվածը, մասնագիտական ձեռքբերումները... Պարզապես պետք է հասկանալ, որ բոլոր գուշակներն էլ իրենց տարօրինակ «պայծառակերպությամբ» կարծես իրենց կամքն են մեզ պարտադրում, եւ այս ամենի հետեւանքով ավելորդ են դառնում մարդկային բանականությունը, վերլուծելու կարողությունը, ընտրության ազատությունը, սերը, ապրելու ձգտումն ու պայքարը: Շատերն էլ այս ճանապարհով նյութական միջոցներ են կորցում՝ երբեւէ չխորհելով իրենց արարքի ծանր եւ արատավոր հետեւանքների մասին: Մատթեոս ավետարանիչն ասում է. «Չգո՛ւշ եղեք սուտ մարգարեներից, որոնք մոտենում են ձեզ ոչխարների զգեստներով, բայց ներսից հափշտակող գայլեր են: Իրենց գործերից՝ կճանաչեք նրանց. միթե փշերից խաղող եւ տատասկից թուզ քաղե՞ն» (Մատթ. Է 15-16):

Սբ Գիրքը վկայում է՝ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով եւ նմանությամբ. «Մարդ ստեղծեց մեր կերպարանքով ու նմանությամբ...» (Մենդ. Ա 26): Մարդն է Աստծո արարչագործության թագն ու պսակը. «Եվ Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան, արու եւ էգ ստեղծեց նրանց: Աստված օրհնեց նրանց ու ասաց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը, տիրեցե՛ք դրան, իշխեցե՛ք ծովի ձկների, երկնքի թռչունների, ողջ երկրի բոլոր անասունների ու երկրի վրայ սողացող բոլոր սո-



ղունների վրա» (Մենդ. Ա 27-28): Մարդն օժտված է ազատ կամքով, բանականությամբ, ունի ընդլու հնարավորություն, նրան է շնորհված «իշխելու եւ տիրելու» իրավունքը, ուստի Տիրոջից բացի՝ ոչ ոք եւ ոչինչ չեն կարող կանխորոշել նրա ապագան: Աստված լուսատուներն ստեղծեց ցերեկն ու գիշերը՝ զատելու, երկիրը լուսավորելու եւ ոչ թե մարդկային ճակատագրերը տնօրինելու համար. «Թող լուսատուներ լինեն երկնքի տարածության մեջ, որպեսզի լուսավորեն երկիրը եւ իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը» (Մենդ. Ա 14): «Աստուած ստեղծեց երկու մեծ լուսատուներ. մեծ լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն իշխելու համար, ինչպես նաեւ աստղեր: Աստված դրանք դրեց երկնքի տարածության մեջ՝ երկիրը լուսավորելու համար, ինչպես նաեւ ցերեկվա ու գիշերվա վրա իշխելու եւ լույսն ու խավարը իրարից բաժանելու համար» (Մենդ. Ա 16-18):

Կռապաշտություն չէ՝ արդյոք աստղերին վերագրել այնպիսի գորություն եւ իմաստություն, որոնցով միայն ամենայնի վրա-

րիչն է օժտված: Ակնհայտ անմտություն է նաեւ կյանքն ու ապագան վստահել անկենդան աստղերին, հուսալ եւ սպասել, որ դրանք գործեն կամ որոշումներ ընդունեն. փոխարենը կարդանք Սբ Գիրքը, հավատանք եւ ապավինենք միայն մեր երկնային Հոր, ապրենք եւ ամրանանք այդ հավատով՝ աղոթափրության, համբերությամբ եւ խոնարհությամբ շտկելով մեր թերությունները, հաղթահարելով թուլություններն ու արատները. այդ ժամ բոլոր գուշակությունները կթվան ծիծաղելի, ունայն եւ անիշեթեթ: Աստղագուշակություններին հետեւելիս հիշենք Եսայի մարգարեի խոսքերը. «Չարչարվեցիր քո խորհուրդներով: Թող վեր կենան ու քեզ փրկեն աստղագուշակները, որոնք դիտում են երկնքի աստղերը, թող պատմեն քեզ, թե ի՞նչ է գալու քո գլխին: Ահավասիկ նրանք բոլորը, ինչպես խռիվ, պիտի այրվեն կրակի մեջ եւ իրենց հոգիները չպիտի կարողանան փրկել բոցից. նստած ես կրակի կայծերի վրա. դրանք քեզ համար օգնություն պիտի լինեն» (Ես. ԽԷ 13-14):

Արփինե ՉԱՆԹԻՎՅԱՆ

Հայկական թեմաների մարմնավորումը Փիթեր Նաջարյանի երկերում

Սկիզբը՝ էջ 7

Թերեւս, հենց Նաջարյանական անկեղծությունն ու համարձակությունն է, որ դուր չեն եկել կարծրատիպերով մտածող եւ դրանով ապրող բազմաթիվ ընթերցողների: Կյանքը վկայում է, որ շատ մարդիկ գերադասում են քաղցր սուտը դառն ճշմարտությունից: Այլ կերպ ասած՝ մարդիկ գերադասում են ինքնախաբեությունը, քանզի միայն այդպես կարելի է չտեսնել այն, ինչ որ չես ուզում տեսնել: Այստեղ ակամայից հիշում ես կարկառուն ամերիկահայ գրող Լեոն-Չավեն Սյուրմեյանի ճշմարտացի խոսքերը. «Մենք՝ հայերս, ինքնախաբեության վարպետներ ենք» (տե՛ս Մ. Տյուրմեյան, К Вам обращаются, Дамы и Господа, Ереван, 1987, էջ 254): Դժվար է չհամաձայնել Սյուրմեյանի տեսակետի հետ, եւ որպես ապացույց՝ կարելի է վկայակոչել հայոց պատմությունը: Յայ ժողովուրդը բազմաթիվ հարվածներ է ստացել իր դարավոր պատմության ընթացքում: Թվում է, թե այդ հարվածները պետք է որ կոփեն հայ ազգին, դարձնեն նրան ավելի իմաստուն ու հեռատես, այսպիսով գերծ պահեն նրան անցյալի սխալները կրկնելուց: Տեսականորեն այս ամենը շատ պարզ է թվում, բայց գործականում ամեն բան ավելի բարդ է: Փիթեր Նաջարյանն իր շատ գրքնկերների պես հայ ազգի խնդիրները կապում է ճակատագրի կատեգորիայի հետ, սակայն ճակատագիրը շատ վերացական հասկացություն է: Իրականում յուրաքանչյուր ազգ ինքն է կերտում իր ներկան եւ ապագան, բայց այդ գործը հաջողությամբ կատարելու համար ազգը պետք է օժտված լինի



դրական հատկանիշների մի ամբողջ համալիրով, որից զուրկ են որոշ ազգեր: Ասելիքը հստակեցնելու համար հիշենք համաշխարհային պատմության առանձին էջեր. շումերները, մեդեացիները, խեթերն ու ասորիները կորցրել են իրենց պետությունները, մասամբ ֆիզիկական բնաջնջման են ենթարկվել, մասամբ էլ ձուլվել են օտար ժողովուրդների հետ, քանզի կորցրել էին իրենց պետական մտածողությունը, ազգային միաբանությունը, ոսոխների դեմ մարտնչելու կամքը եւ բարոյական սկզբունքները: Ասվածից հետեւություն, որ «ճակատագիր» հասկացությունն ընդամենը քող է ազգի արատները թաքցնելու եւ սեփական ձախողումներն արդարացնելու համար: Զանի որ Փիթեր Նաջարյանն իր մարդկային տեսակով ազնիվ է ու անկեղծ, նրան դժվար է մեղադրել ճշմարտությունը միտումնավոր նենգափո-

խելու մեջ: Պարզապես նա փոքր-ինչ գերազնահատում է ճակատագրի դերը հայ ժողովրդի կյանքում: Վերջինս հաշվով գրողն արվեստագետ է եւ հաճախ ուղորդվում է զգացմունքներով, ուստի չի կարող գերծ մնալ որոշակի սխալներից ու մոլորություններից: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, երբ տաղանդավոր կամ նույնիսկ հանճարեղ գրողներ զգացմունքային պոռթկման պահերին թյուր դատողություններ են արել, բայց հետո հասկացել են իրենց սխալը: Յիշենք հայոց ցեղասպանության շրջանում ապրած եւ դրա զոհը դարձաց տաղանդաշատ հայ մտավորականներին, որոնք մի պահ հավատացել էին երիտթուրքերի կեղծ հավաստիացումներին՝ «ազգերի եղբայրության եւ նրանց խաղաղ համակեցության մասին»: Այնուհետեւ նրանք գիտակցեցին իրենց սխալը, բայց արդեն շատ ուշ էր որեւէ բան փոխել: Յիշենք նաեւ հայ ազգի մեծագույն բանաստեղծ Եղիշե Չարենցին, որը չափազանց ոգեւորված էր մեծ հույսեր երկապում դրա հետ, սակայն ավելի ուշ հասկացավ, որ այդ պատմական իրադարձությունն ավելի շատ չարիք բերեց ժողովրդին, քան օգուտ: Ավելորդ չենք համարում հիշատակել նաեւ մեծանուն Վիլյամ Սարոյանին, որն իր երկերում մերթ ընթ մերթ հակասական տեսակետներ է արտահայտել, ինչը չէր վրիպել գրաքննադատների ու շարժումներից: Եթե գրողի թյուր դատողությունները կարելի է բացատրել արվեստագետներին հատուկ զգացմունքայնությամբ եւ սուբյեկտիվիզմով, ապա

ինչպե՞ս բացատրել որոշ գրողների երկերում հանդիպող ներքին հակասությունները, որոնք, ի դեպ, առկա են նաեւ Փիթեր Նաջարյանի գրվածքներում: Այստեղ կարելի է երկու բացատրություններ կազմել. 1) Գրողները հիմնականում պատկերում են իրական կյանքը, իսկ վերջինս ինքնին հիմնված է հակասությունների եւ հակադրությունների վրա: Ի վերջո, կյանքը դիմամիկ երեւոյթ է. այն, ինչ միանգամայն ճիշտ է այսօր, կարող է բացարձակապես սխալ լինել վաղը, 2) Ցանկացած գրող իր ստեղծագործական կյանքի ընթացքում գաղափարական զարգացման լուրջ ճանապարհ է անցնում, իսկ այդ ընթացքում միանգամայն հնարավոր են տեսակետների եւ մոտեցումների փոփոխություններ: Այնպես որ գրողը կարող է տարբեր գեղարվեստական երկերում տրամագծորեն տարբերվող կարծիքներ արտահայտել միեւնույն խնդրի կամ երեւոյթի շուրջ:

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Գլխավոր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Գլխավորակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

web կայք՝ kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 3.7.2013 թ.

Տպագրանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ